ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

01.2022

02.2022

03.2022

04.2022
Ապրիլ

05.2022

06.2022

07.2022

08.2022

09.2022

10.2022

11.2022

12.2022

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

Թողարկման 30-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2022

Ապրիլ

թիվ 4 (284)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «ՖԱՍԹ ՔԵՇ», «ԳԱՌԱՆՏ ԿՐԵԴԻՏ» ՍՊԸ-ների գրավատնային գործունեության լիցենզիաները ուժը կորցրած ճանաչելու մասին

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները «ԱԷՍ Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ «Մասիս», «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ «ՀԱՅՐԵՆԻՔ», «ՏԱՇԻՐ» մասնաճյուղերը գրանցելու մասին

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները 1 փոխանակման կետի նկատմամբ տուգանք կիրառելու, 1 փոխանակման կետի նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

5 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 46-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկերի և վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից էլեկտրոնային փողի հաշիվներով գործառնությունների իրականացման կարգ և վճարահաշվարկային ծառայությունների մատուցման կանոններ սահմանելու մասին»

7 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 47-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի ապրիլի 13-ի թիվ 74-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

8 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 48-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի խորհրդի 2015 թվականի հունվարի 13-ի թիվ 2-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

12 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 49-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 209-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

15 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 50-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 286-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

16 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 54-Ն որոշումը «Քսան հազար դրամ անվանական արժեքով 2021 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամները շրջանառության մեջ դնելու մասին»

19 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 55-Ն որոշումը «2022-2023 թվականների հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված «Եղիշե Չարենց-125», «Հայոց բանակի կազմավորման 30-ամյակ» ոսկե և «Հայոց բանակի կազմավորման 30-ամյակ», «Օգանեսոն (Og)», «Դավիթ Բեկ», «Օհան Դուրան-100» արծաթե հուշադրամները շրջանառության մեջ դնելու մասին»

26 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 56-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի նոյեմբերի 5-ի թիվ 347-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

30 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 65-Ն որոշումը «Բանկերի կապիտալի հակացիկլիկ շեմի չափը հաստատելու մասին (2022 թվականի առաջին եռամսյակ)»

31 ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Ուժը կորցրած են ճանաչվել*** «ՖԱՍԹ ՔԵՇ», «ԳԱՌԱՆՏ ԿՐԵԴԻՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների գրավատնային գործունեության լիցենզիաները (որոշումներ թիվ 61Ա, 62Ա):
- ***Գրանցվել են*** «ԱԷՍ Կրեդիտ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության «Մասիս», «ՅՈՒՆԻԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության «ՀԱՅՐԵՆԻՔ», «ՏԱՇԻՐ» մասնաճյուղերը (որոշումներ թիվ 1/157Ա, 163Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 1 փոխանակման կետի նկատմամբ ***կիրառվել է տուգանք*** նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի չափով (որոշում թիվ 1/168Ա), 1 փոխանակման կետի ***հայտարարվել է նախազգուշացում*** հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշում թիվ 1/167Ա):

*Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկերի և վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից էլեկտրոնային փողի հաշիվներով գործառնությունների իրականացման կարգ և վճարահաշվարկային ծառայությունների մատուցման կանոններ սահմանելու մասին**

Նպատակ ունենալով նպաստելու անկանխիկ եղանակով վճարումների զարգացմանը՝ մանրածախ գործիքի օգտագործման համար գործարար սովորույթ և բարենպաստ պայմաններ ստեղծելու միջոցով, ինչպես նաև նվազեցնելու կանխիկի սպասարկման հետ կապված հնարավոր ռիսկերի ի հայտ գալու հավանականությունը,

հիմք ընդունելով «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 5-րդ հոդվածի 2-րդ մասի ե) կետով, 20-րդ հոդվածի 1-ին մասի ե) և իդ) կետերով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային փողի հաշիվներով գործառնություններն իրականացնելիս Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկերը և վճարահաշվարկային կազմակերպությունները, այդ թվում՝ էլեկտրոնային փող թողարկելու թույլտվություն ստացած, չեն կարող կատարել.

1) առևտրային բանկերի և (կամ) վճարահաշվարկային կազմակերպությունների գլխամասերից և (կամ) մասնաճյուղերից դրամական միջոցների փոխանցում, եթե.

ա. փոխանցման նախաձեռնումը կատարվում է Հայաստանում էլեկտրոնային փող թողարկող կազմակերպության կողմից թողարկված էլեկտրոնային փողի հաշվից և ենթակա է ստացման կանխիկ միջոցներով՝ Հայաստանում,

բ. փոխանցման նախաձեռնումը կատարվում է կանխիկ միջոցներով Հայաստանում և ենթակա է ստացման արտասահմանյան էլեկտրոնային փող թողարկող կազմակերպության կողմից թողարկված էլեկտրոնային փողի հաշվին,

գ. փոխանցման նախաձեռնումը կատարվում է կանխիկ միջոցներով Հայաստանում և ենթակա է ստացման Հայաստանում էլեկտրոնային փող թողարկող կազմակերպության կողմից թողարկված էլեկտրոնային փողի հաշվին,

դ. փոխանցման նախաձեռնումը կատարվում է Հայաստանում էլեկտրոնային փող թողարկող կազմակերպության կողմից թողարկված էլեկտրոնային փողի հաշվից և ենթակա է ստացման կանխիկ միջոցներով՝ արտասահմանում:

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. մարտի 22-ին (ՀՀԳՏ, 06.04. 2022):

2) Առանց բանկային հաշվի բացման դրամական միջոցների փոխանցման համակարգերով (այսուհետ՝ Հայաստանյան և (կամ) արտասահմանյան համակարգեր) դրամական միջոցների փոխանցում, եթե.

ա. փոխանցման նախաձեռնումը կատարվում է Հայաստանում էլեկտրոնային փող թողարկող կազմակերպության կողմից թողարկված էլեկտրոնային փողի հաշվից և ենթակա է ստացման կանխիկ միջոցներով Հայաստանում՝ Հայաստանյան և (կամ) արտասահմանյան համակարգերով,

բ. փոխանցման նախաձեռնումը կատարվում է Հայաստանից կանխիկ միջոցներով՝ Հայաստանյան և (կամ) արտասահմանյան դրամական միջոցների փոխանցումների համակարգերով և ենթակա է ստացման արտասահմանյան էլեկտրոնային փող թողարկող կազմակերպության կողմից թողարկված էլեկտրոնային փողի հաշվին,

գ. փոխանցման նախաձեռնումը կատարվում է կանխիկ միջոցներով Հայաստանից՝ Հայաստանյան և (կամ) արտասահմանյան դրամական միջոցների փոխանցումների համակարգերով և ենթակա է ստացման Հայաստանում էլեկտրոնային փող թողարկող կազմակերպության կողմից թողարկված էլեկտրոնային փողի հաշվին,

դ. փոխանցման նախաձեռնումը կատարվում է Հայաստանում էլեկտրոնային փող թողարկող կազմակերպության կողմից թողարկված էլեկտրոնային փողի հաշվից և ենթակա է ստացման կանխիկ միջոցներով արտասահմանում՝ Հայաստանյան և (կամ) արտասահմանյան դրամական միջոցների փոխանցումների համակարգերով:

2. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության տարածքում արգելվում է արտասահմանյան էլեկտրոնային փող թողարկող կազմակերպության կողմից թողարկված էլեկտրոնային փողի (Վեբմանի, Յանդեկսդենգի և այլ) հաշվից կանխիկացման իրականացումը կամ այդ հաշիվների կանխիկով համալրումը, ինչպես նաև արտասահմանյան էլեկտրոնային փող թողարկող կազմակերպության կողմից թողարկված լիցքավորման քարտերի ձեռքբերումը կանխիկ միջոցներով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի մայիսի 2-ից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան
25 մարտի 2022 թ., Ն 46-Ն

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի ապրիլի 13-ի թիվ 74-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին**

Նպատակ ունենալով նպաստելու անկանխիկ եղանակով վճարումների զարգացմանը՝ մանրածախ գործիքի օգտագործման համար գործարար սովորույթ և բարենպաստ պայմաններ ստեղծելու միջոցով, ինչպես նաև նվազեցնելու կանխիկի սպասարկման հետ կապված հնարավոր ռիսկերի ի հայտ գալու հավանականությունը,

հիմք ընդունելով «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի ապրիլի 13-ի «Էլեկտրոնային փող թողարկելու թույլտվության տրամադրման, կասեցման և դադարեցման կարգն ու պայմանները, էլեկտրոնային փող թողարկողներին ներկայացվող պահանջները» կանոնակարգ 16/1-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները.
   1) Կանոնակարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետից հանել «լիցքավորման քարտերի վաճառք (իրացում)» և «, մեկանգամյա օգտագործման չվերալիցքավորվող էլեկտրոնային փողի քսակների վաճառք (իրացում)» բառերը:
   2) Ուժը կորցրած ճանաչել Կանոնակարգի 27-րդ կետի 1-ին և 3-րդ ենթակետերը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի մայիսի 2-ից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան
25 մարտի 2022 թ., N 47-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. մարտի 22-ին (ՀՀԳՏ, 06.04. 2022):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2015 թվականի հունվարի 13-ի թիվ 2-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

Նպատակ ունենալով նպաստելու անկանխիկ եղանակով վճարումների զարգացմանը՝ մանրածախ գործիքի օգտագործման համար գործարար սովորույթ և բարենպաստ պայմաններ ստեղծելու միջոցով, ինչպես նաև նվազեցնելու կանխիկի սպասարկման հետ կապված հնարավոր ռիսկերի ի հայտ գալու հավանականությունը,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի 55-րդ հոդվածը, «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը, 19.1-րդ հոդվածի 7-րդ մասը և 25-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ո ւ մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2015 թվականի հունվարի 13-ի ««Էլեկտրոնային փողի թողարկման և սպասարկման (շրջանառության) կարգն ու պայմանները, էլեկտրոնային փողով գործառնությունների իրականացմանը ներկայացվող պահանջները» կանոնակարգ 16.02-ը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի ապրիլի 13-ի թիվ 73-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 2-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային փողի թողարկման և սպասարկման (շրջանառության) կարգն ու պայմանները, էլեկտրոնային փողով գործառնությունների իրականացմանը ներկայացվող պահանջները» կանոնակարգ 16.02-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) Կանոնակարգի 3-րդ կետի 7-րդ ենթակետից հանել «, Տարածողի» բառը:
2) Կանոնակարգի 3-րդ կետի 8-րդ ենթակետի « և (կամ) կանխիկացնել (ներկայացնել մարման)» բառերը փոխարինել «և (կամ) ներկայացնել մարման» բառերով:
3) Կանոնակարգի 3-րդ կետի 8-րդ ենթակետը լրացնել 8.1-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

« 8.1) Օգտագործողի գրանցում՝ Թողարկողի Համակարգում Օգտագործողի անունով Հաշվառման հաշվի բացման գործընթաց,»:

4) Ուժը կորցրած ճանաչել Կանոնակարգի 3-րդ կետի 11-րդ, 12-րդ և 16-րդ ենթակետերը:
5) Կանոնակարգի 3-րդ կետի 14-րդ ենթակետից հանել «, ինչպես նաև լիցքավորման քարտերի և մեկանգամյա օգտագործման չվերալիցքավորվող էլեկտրոնային փողի քսակների վաճառք» բառերը:
6) Կանոնակարգի 5-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. մարտի 22-ին (ՀՀԳՏ, 06.04. 2022):

«1) Ընդհանուր նշանակության էլեկտրոնային փող (այսուհետ՝ էլեկտրոնային փող)՝ միկրոպրոցեսորում (չիպում) կամ Թողարկողի տվյալների կենտրոնացված շտեմարանում պահվող դրամական արժեք (կանխավճարված էլեկտրոնային արժեք), որի Հաշվառման հաշվին միջոցները կարող են մուտքագրվել միայն անկանխիկ եղանակով,

2) Սոցիալական նշանակության էլեկտրոնային փող (այսուհետ՝ սոցիալական էլեկտրոնային փող)՝ միկրոպրոցեսորում (չիպում) կամ Թողարկողի տվյալների կենտրոնացված շտեմարանում պահվող դրամական արժեք (կանխավճարված էլեկտրոնային արժեք), որի Հաշվառման հաշվին (հաշվարկային հաշվին) միջոցները կարող են մուտքագրվել միայն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից վճարվող՝ սոցիալական պաշտպանության (ապահովության) ծրագրերով նախատեսված կենսաթոշակների, պարբերական բնույթ կրող (որոշակի կամ անորոշ ժամկետով տրվող) նպաստների և դրամական այլ վճարների գումարները:»:

7) Ուժը կորցրած ճանաչել Կանոնակարգի 7-րդ կետի 1-ին և 3-րդ ենթակետերը:
8) Կանոնակարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետում «կանխիկ կամ անկանխիկ եղանակով» բառերը փոխարինել «բանկային հաշվից և (կամ) վճարային քարտից» բառերով:
9) Կանոնակարգի 7-րդ կետի 5-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) էլեկտրոնային փողի մարում՝ գործառույթ, որի արդյունքում Թողարկողը պակասեցնում է Համակարգում գրանցված Հաճախորդի Հաշվառման Հաշվում առկա էլեկտրոնային փողը մարման ենթակա հրահանգված գումարի չափով՝ բանկային հաշվին և (կամ) վճարային քարտին փոխանցելու միջոցով՝ պակասեցնելով իր դրամական պարտավորության չափը Հաճախորդի նկատմամբ: Ընդ որում՝ սոցիալական էլեկտրոնային փողի դեպքում մարումը կարող է իրականացվել նաև կանխիկ եղանակով,»:

10) Կանոնակարգի 8-րդ կետի 10-րդ ենթակետից հանել «և լիցքավորման քարտերի» բառերը:
11) Ուժը կորցրած ճանաչել Կանոնակարգի 8-րդ կետի 11-րդ, 12-րդ, 13-րդ և 16-րդ ենթակետերը:
12) Ուժը կորցրած ճանաչել Կանոնակարգի 11-րդ, 12-րդ և 13-րդ կետերը:
13) Կանոնակարգի 19-րդ կետից հանել «, բացառությամբ սույն կանոնակարգի 20-րդ կետում սահմանված դեպքի» բառերը:
14) Կանոնակարգի 20-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«20. Սոցիալական էլեկտրոնային փող Օգտագործողի Հաշվառման հաշվին առկա միջոցներն ենթակա են մարման (կանխիկացման) միայն Թողարկողի միջոցով: Սոցիալական էլեկտրոնային փող Օգտագործողի Հաշվառման հաշվին առկա միջոցներից փոխանցում և (կամ) փոխարկում չի կարող իրականացվել:»:

15) Ուժը կորցրած ճանաչել Կանոնակարգի 22-րդ և 23-րդ կետերը:
16) Կանոնակարգի 21-րդ կետից հանել «, բացառությամբ սույն կանոնակարգի 22-րդ կետով սահմանված դեպքի» բառերը:
17) Կանոնակարգի 24-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«24. Թողարկողի Համակարգում Օգտագործողի անունով Հաշվառման հաշիվ բացելու համար Թողարկողը պետք է ապահովի Օգտագործողի անունով բացված բանկային հաշիվ և (կամ) վճարային քարտ Օգտագործողի կողմից կցելու հնարավորությունը՝ վերջիններիս վերաբերյալ տվյալները գրանցելով իր Համակարգում: Առանց Թողարկողի Համակարգում Օգտագործողի անունով բանկային հաշվի և (կամ) վճարային քարտի տվյալները գրանցելու օգտագործողի անունով Հաշվառման հաշիվ չի կարող բացվել, բացառությամբ սոցիալական էլեկտրոնային փողի:»:

18) Ուժը կորցրած ճանաչել Կանոնակարգի 25-րդ կետը:

19) Կանոնակարգի 27-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«27. Օգտագործողի Հաշվառման Հաշվում առկա միջոցները Օգտագործողի առաջին իսկ պահանջով ենթակա են Թողարկողի կողմից մարման՝ անձամբ և (կամ) Գործակալի միջոցով: Անկախ ցանկացած հանգամանքից, Թողարկողն ապահովում է Օգտագործողի Հաշվառման Հաշվում առկա միջոցների մարումն իր կողմից»:

20) Կանոնակարգի 28-րդ կետի «կանխիկացումն (մարումը)» բառերը փոխարինել «մարումն» բառով:

21) Կանոնակարգի 38-րդ կետի «հինգ աղյուսակից» բառերը փոխարինել «չորս աղյուսակից» բառերով:

22) Կանոնակարգի 38-րդ կետից հանել «լիցքավորման քարտերի թողարկման,» բառերը:

23) Կանոնակարգի 39-րդ կետում «,Գործակալի կամ Տարածողի» բառերը փոխարինել «կամ Գործակալի» բառերով:

24) Կանոնակարգի 39-րդ կետի 2-րդ ենթակետի ««մեկանգամյա» կամ «վերալիցքավորվող»» բառերը փոխարինել ««էլեկտրոնային փող» կամ «սոցիալական էլեկտրոնային փող»» բառերով:

25) Կանոնակարգի 39-րդ կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա. «կանխիկ միջոցներով», եթե սոցիալական էլեկտրոնային փող Օգտագործողի Հաշվառման Հաշվից էլեկտրոնային փողի մարումը իրականացվել է կանխիկ միջոցներով,»:

26) Կանոնակարգի 41-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) «Էլեկտրոնային փողի ձև» սյունակում ներկայացվում է մատուցված ծառայությունների կամ վաճառված ապրանքի դիմաց կիրառվող էլեկտրոնային փողի ձևը՝ «էլեկտրոնային փող», եթե մատուցված ծառայության կամ վաճառված ապրանքի դիմաց վճարումը կատարվել է էլեկտրոնային փողով, կամ՝ «սոցիալական էլեկտրոնային փող», եթե մատուցված ծառայության կամ վաճառված ապրանքի դիմաց վճարումը կատարվել է սոցիալական էլեկտրոնային փողով:»:

27) Ուժը կորցրած ճանաչել Կանոնակարգի 39-րդ կետի 3-րդ ենթակետի «գ» պարբերությունը, 6-րդ ենթակետի «դ» և «զ» պարբերությունները, 40-րդ կետը, 42-րդ և 43-րդ կետերի 1-ին ենթակետերի «է» պարբերությունը:

28) Կանոնակարգի 42-րդ կետը լրացնել 2.1 ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1) «Էլեկտրոնային փողի ձև» սյունակում ներկայացվում է Համակարգում բացված Հաշվառման Հաշիվների ձևի վերաբերյալ տեղեկատվություն, որտեղ նշվում է՝

ա. «էլեկտրոնային փող», եթե Համակարգում բացվել է էլեկտրոնային փողի Հաշվառման Հաշիվ,

բ. «սոցիալական էլեկտրոնային փող», եթե Համակարգում բացվել է սոցիալական էլեկտրոնային փողի Հաշվառման Հաշիվ:»:

29) Կանոնակարգի 43-րդ կետը լրացնել 2.1 ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1) «Էլեկտրոնային փողի ձև» սյունակում ներկայացվում է Համակարգում բացված կամ փակված Հաշվառման Հաշիվների ձևի վերաբերյալ տեղեկատվություն, որտեղ նշվում է՝

ա. «էլեկտրոնային փող», եթե Համակարգում բացվել կամ փակվել է էլեկտրոնային փողի Հաշվառման Հաշիվ,

բ. «սոցիալական էլեկտրոնային փող», եթե Համակարգում բացվել կամ փակվել է սոցիալական էլեկտրոնային փողի Հաշվառման Հաշիվ:»:

30) Կանոնակարգի Հավելված 2-ի «Թողարկված էլեկտրոնային փողի, լիցքավորման քարտերի, էլեկտրոնային փողի սպասարկման և մարման վերաբերյալ» հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվություն) վերնագրից հանել «լիցքավորման քարտերի,» բառերը:

31) Հաշվետվության 1-ին աղյուսակի 2-րդ սյունակի «մեկանգամյա» բառը փոխարինել «էլեկտրոնային փող» բառերով, իսկ «վերալիցքավորվող» բառը փոխարինել «սոցիալական էլեկտրոնային փող» բառերով:

32) Հաշվետվության 1-ին աղյուսակի 3-րդ սյունակից հանել «Տարածող» և 4-րդ սյունակից՝ «վաճառք» բառերը:

33) Հաշվետվության 1-ին աղյուսակի 6-րդ սյունակից հանել «/միջոցներից» «տերմինալի միջոցով» և «լիցքավորման քարտերի միջոցով» բառերը:

34) Ուժը կորցրած ճանաչել Հաշվետվության 2-րդ «2.Տպված, վաճառված կամ հետ գնված լիցքավորման քարտերի վերաբերյալ, ըստ անվանական արժեքի» 2-րդ կետը:

35) Հաշվետվության 3-րդ աղյուսակի 2-րդ սյունակի «մեկանգամյա» բառը փոխարինել «էլեկտրոնային փող» բառերով, իսկ «վերալիցքավորվող» բառը փոխարինել «սոցիալական էլեկտրոնային փող» բառերով:

36) Հաշվետվության 4-րդ և 5-րդ աղյուսակները լրացնել 2.1 սյունակով՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1) «Էլեկտրոնային փողի ձև» սյունակում ներկայացվում է Համակարգում բացված Հաշվառման Հաշիվների ձևի վերաբերյալ տեղեկատվություն, որտեղ նշվում է՝

ա. «էլեկտրոնային փող», եթե Համակարգում բացվել է էլեկտրոնային փողի Հաշվառման Հաշիվ,

բ. «սոցիալական էլեկտրոնային փող», եթե Համակարգում բացվել է սոցիալական էլեկտրոնային փողի Հաշվառման Հաշիվ:»:

37) Հաշվետվության 4-րդ աղյուսակի 1-ին սյունակից և 5-րդ աղյուսակի 1-ին սյունակներից հանել «Տարածող» բառը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի մայիսի 2-ից:

3. Մինչև սույն որոշման ուժի մեջ մտնելը Թողարկողի կողմից Օգտագործողների համար բացված, ինչպես նաև սույն որոշման ուժի մեջ մտնելուց հետո բացվող Հաշվառման հաշիվներին բանկային հաշիվ և (կամ) վճարային քարտ կցելու պահանջի կատարումը Թողարկողը պետք է ապահովի 2022 թվականի հուլիսի 1-ից՝ Օգտագործողներին այդ մասին պատշաճ տեղեկացնելու միջոցով: Ընդ որում՝ 2022 թվականի հուլիսի 1-ից հետո Հաշվառման հաշիվներին բանկային հաշիվ և (կամ) վճարային քարտ չկցելու դեպքում Թողարկողի կողմից Օգտագործողների համար բացված Հաշվառման հաշիվները չեն կարող համալրվել որևէ եղանակով, կամ այդ հաշիվներին առկա միջոցներից չեն կարող կատարվել կանխիկացում, փոխանցում կամ փոխարկում:

4. Մինչև սույն որոշման ուժի մեջ մտնելը Թողարկողի կողմից թողարկված մեկանգամյա օգտագործման չվերալիցքավորվող էլեկտրոնային փողերը ենթակա են Թողարկողի կողմից սպասարկման՝ մինչև առկա միջոցների վերջնական սպառումը:

5. Սույն որոշմամբ սահմանված այն կարգավորումները, որոնք վերաբերում են սոցիալական էլեկտրոնային փողերին, գործում են մինչև 2023 թվականի փետրվարի 1-ը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան

25 մարտի 2022 թ., Ն 48-Ն

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 209-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին**

Նպատակ ունենալով Հայաստանի Հանրապետությունում խթանելու անկանխիկ գործառնությունների իրականացումը և ապահովելու սպառողին տրամադրվող ծառայությունների անվտանգությունը,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի «ե» կետը, 49-րդ հոդվածը, «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի «ե» և «իդ» կետերով, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի օգոստոսի 16-ի ««Ավտոմատ ինքնասպասարկող սարքերի տեղադրման, շահագործման, անվտանգության ապահովման և դրանց միջոցով ֆինանսական գործառնությունների իրականացման վերաբերյալ կարգը» հաստատելու մասին» թիվ 209-Ն որոշմամբ հաստատված «Ավտոմատ ինքնասպասարկող սարքերի տեղադրման, շահագործման, անվտանգության ապահովման և դրանց միջոցով ֆինանսական գործառնությունների իրականացման վերաբերյալ կարգ»-ի (այսուհետ՝ Կարգ) Հավելված 1-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի մայիսի 2-ից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան
25 մարտի 2022 թ., N 49-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. մարտի 22-ին (ՀՀԳՏ, 06.04. 2022):

Հավելված
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2022 թվականի մարտի 22-ի թիվ 49-Ն որոշման

«Հավելված 1
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի օգոստոսի 16-ի
թիվ 209-Ն որոշման Հավելվածի

ՖԳԻԱՍ-երի միջոցով իրականացվող ֆինանսական գործառնություններ

	Արժույթի փոխանակման մեքենա	Վճարումների ընդունման տերմինալ	Ավտոմատ գանձման մեքենա (ԱԳՄ)	Բանկային ավտոմատացված մեքենա
1. Ֆինանսական միջնորդի միջոցով ապրանքների և(կամ) ծառայությունների դիմաց վճարումների ընդունում Հայաստանի Հանրապետության դրամով	-	+	+	+
2. Համայնքային և պետական բյուջե ուղղված վճարումների ընդունում Հայաստանի Հանրապետության դրամով	-	+	+	+
3. Բանկային (ավանդային և ընթացիկ հաշիվներ) և հաշվառման հաշիվների համալրում Հայաստանի Հանրապետության դրամով	-	+	+	+
3.1. Հայաստանյան և արտասահմանյան էլեկտրոնային փող թողարկողների հաշվառման հաշիվների համալրում և հաշիվներից ելքագրում Հայաստանի Հանրապետության դրամով և(կամ) արտարժույթով կանխիկ միջոցներով	-	-	-	-
4. Բանկային (ավանդային և ընթացիկ) հաշիվների համալրում արտարժույթով	-	-	-	-
5. Բանկային հաշվից կանխիկացում Հայաստանի Հանրապետության դրամով	-	-	+	+
6. Բանկային հաշվից կանխիկացում արտարժույթով	-	-	-	-
7. Առանց հաշիվների վարկերի մարում Հայաստանի Հանրապետության դրամով	-	+	+	+
8. Առանց հաշիվների վարկերի մարում արտարժույթով	-	-	-	-
9. Վարկի տոկոսագումարի մարում միայն Հայաստանի Հանրապետության դրամով	-	+	+	+
10. Հայաստանի Հանրապետության դրամի մուտքագրմամբ իրականացվող դրամական փոխանցումներ, այդ թվում՝ առանց հաշիվների բացման**	-	+	+	+
10.1. Դրամական միջոցների փոխանցումների հայաստանյան և (կամ) արտասահմանյան համակարգերով փոխանցման նախաձեռնում էլեկտրոնային փողի հաշվից, որն ենթակա է ստացման կանխիկ միջոցներով՝ Հայաստանում և (կամ) արտասահմանում	-	-	-	-

** *Սույն ծառայությունը կարող է մատուցվել այն դեպքում, երբ համապատասխան պրոցեսինգային ընկերությունը (համակարգի օպերատորը) թույլատրում է իրականացնել նմանատիպ գործառնություն:*

10.2. Դրամական միջոցների փոխանցումների հայաստանյան և (կամ) արտասահմանյան համակարգերով փոխանցման նախաձեռնում կանխիկ միջոցներով, որն ենթակա է ստացման Հայաստանյան և(կամ) արտասահմանյան էլեկտրոնային փող թողարկողների էլեկտրոնային փողի հաշիվներով:	-	-	-	-
11. Արտարժույթի մուտքագրմամբ իրականացվող դրամական փոխանցումներ, այդ թվում՝ առանց հաշիվների բացման	-	-	-	-
12. Կանխիկ արտարժույթի փոխարկում Հայաստանի Հանրապետության կանխիկ դրամի	+	-	-	+
13. Հայաստանի Հանրապետության կանխիկ դրամի փոխարկում կանխիկ արտարժույթի	-	-	-	-
14. Կենտրոնական բանկի կողմից թույլատրված նոր ֆինանսական գործառնություններ	Ըստ համաձայնության	Ըստ համաձայնության	Ըստ համաձայնության	Ըստ համաձայնության

»:

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 286-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին**

Նպատակ ունենալով հստակեցնելու վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից ներկայացվող հաշվետվությունների լրացման կարգը, դրանցում արտացոլվող տեղեկատվությունը,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի «ե» կետը, «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերը, 25-րդ հոդվածի 2-րդ կետը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի «ե» և «իդ» կետերով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հոկտեմբերի 25-ի «Վճարահաշվարկային կազմակերպությունների ֆինանսական և այլ հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 17/03-ը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի հուլիսի 6-ի թիվ 333-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 286-Ն որոշմամբ հաստատված «Վճարահաշվարկային կազմակերպությունների ֆինանսական և այլ հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 17/03-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունը.

1) Կարգի 25-րդ կետի 13-րդ ենթակետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

«13) «Էլեկտրոնային փողերի լիցքավորում» տողում, լրացվում է միայն «Իրականացված գործառնություններ»-ից «Անկանխիկ եղանակով» դաշտի սյունակները, որտեղ նշվում են հաճախորդների կողմից էլեկտրոնային փողերի լիցքավորմանն ուղղված անկանխիկ վճարումների ծավալը և քանակը։»։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից վեց ամիս հետո։

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան
25 մարտի 2022 թ., Ն 50-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն։*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. մարտի 22-ին (ՀՀԳՏ, 06.04.2022)։

*Քսան հազար դրամ անվանական արժեքով 2021 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամները շրջանառության մեջ դնելու մասին**

Նպատակ ունենալով կազմակերպելու Հայաստանի Հանրապետության դրամանիշերի շրջանառությունը,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետը, 41-րդ և 42-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. 2022 թվականի մայիսի 3-ից շրջանառության մեջ դնել սույն որոշման Հավելվածով սահմանված նմուշի և նկարագրությամբ քսան հազար դրամ անվանական արժեքով 2021 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամները:

2. Սահմանել, որ քսան հազար դրամ անվանական արժեքով 2021 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամները Հայաստանի Հանրապետության տարածքում օրինական վճարամիջոց են և ենթակա են անվերապահ ընդունման իրենց անվանական արժեքով՝ փողով արտահայտված բոլոր պարտավորությունների դիմաց, առանց ժամկետային սահմանափակումների: Քսան հազար դրամ անվանական արժեքով 1999, 2007, 2009, 2012, 2018 թվականների թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամները մնում են շրջանառության մեջ առանց սահմանափակումների և շրջանառության պայմանների փոփոխության:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան
8 ապրիլի 2022 թ., Ն 54-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. ապրիլի 5-ին (ՀՀԳՏ, 12.04. 2022):

Հավելված

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2022 թվականի ապրիլի 5-ի թիվ 54-Ն որոշման

Քսան հազար դրամ անվանական արժեքով 2021 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամի նմուշը





ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Քսան հազար դրամ անվանական արժեքով 2021 թ. թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամի

20000 դրամ անվանական արժեքով 2021 թ. թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամի չափերն են՝ 150 x 72 մմ: Թղթադրամը տպագրված է Hybrid™ բարձրորակ կոմպոզիտային հումքի վրա, որը երկու կողմերից պոլիէսթերի բարակ շերտով պատված բամբակե թուղթ է: Թղթադրամը պարունակում է Հովհաննես Այվազովսկու դիմանկարը պատկերող բազմերանգ, ինչպես նաև անվանական արժեքն արտահայտող երկերանգ ջրանիշներ: Թղթադրամի հիմնական գույնը կանաչն է:

Դիմերես

Թղթադրամի վերին մասում խոր տպագրության եղանակով տպագրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ», իսկ դրանից ներքև մանրատառաշարով՝ կրկնվող «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ 20000 ՔՍԱՆ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ» բառերը և թվերը:

Թղթադրամի ձախ հատվածում Հովհաննես Այվազովսկու դիմանկարն է և «ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ» գրառումը: Դիմանկարից ձախ ուղղահայաց տպագրված են թղթադրամի անվանական արժեքը թվերով՝ «20000», և սև գույնով թղթադրամի համարանիշը՝ բաղկացած «ԵԲ» տառերից (թղթադրամի սերիան) և ութ թվերից (թղթադրամի համարը): Դրանց ներքևում առկա է օպտիկապես փոփոխական ներկով տպագրված պաշտպանական հատկանիշ, որն ունի շրջանակի տեսք և պարունակում է նավի պատկեր ու հորիզոնական «լողացող» 3D վառ էլեմենտ:

Հովհաննես Այվազովսկու դիմանկարի ֆոնին նրա կտավներից հատվածներ են և նավի պատկեր: Թղթադրամի անվանական արժեքը բառերով և թվերով՝ «ՔՍԱՆ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ 20000», տպագրված է ներքևի աջ մասում:

Թղթադրամի մեջտեղում առկա է պատուհանաձև պաշտպանական ներգիծ՝ կանաչից կապույտի գունափոխման հատկանիշով. պարունակում է «լողացող» 3D վառ պատկերներ՝ անկյունակների տեսքով, ՀՀ դրամի գրանշանի պատկերը, ինչպես նաև «20000» ապամետաղականացված գրառումը:

Թղթադրամի վերևի աջ հատվածում սև գույնով տպագրված է թղթադրամի համարանիշը, որից ներքև ՀՀ կենտրոնական բանկի նախագահի և ՀՀ ֆինանսների նախարարի ստորագրություններն են: Դրանցից աջ թափանցիկ պատուհան է՝ նավի հստակ պատկերով:

Թղթադրամի աջ եզրին հորիզոնական տպագրված է թողարկման տարեթիվը՝ «2021», ուղղահայաց՝ «CENTRAL BANK OF THE REPUBLIC OF ARMENIA»:

Տկարատեսների համար թղթադրամի ձախ և աջ եզրերին կան շոշափելի ուղղահայաց գծեր:

Դարձերես

Թղթադրամի վերին մասում «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» գրառումն է, իսկ դրանից ներքև մանրատառաշարով՝ կրկնվող «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ 20000 ՔՍԱՆ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ» բառերը և թվերը:

Թղթադրամի վերևի ձախ անկյունում թափանցիկ պատուհան է՝ նավի հստակ պատկերով:

Թղթադրամի մեջտեղի հատվածում Հովհաննես Այվազովսկու պատկերասրահի շենքն է, նրա ծննդավայր Թեոդոսիայի համապատկերը և երկգույն մարգարտափայլ ժապավեն:

Թղթադրամի աջ մասում Հովհաննես Այվազովսկու արծանի պատկերն է, որից աջ ուղղահայաց՝ «20000» թիվը և «CENTRAL BANK OF THE REPUBLIC OF ARMENIA» մակագրությունը:

Թղթադրամի անվանական արժեքը թվերով և բառերով՝ «20000 ՔՍԱՆ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ», տպագրված է ներքևի հատվածում:

*2022-2023 թվականների հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված «Եղիշե Չարենց-125», «Հայոց բանակի կազմավորման 30-ամյակ» ոսկե և «Հայոց բանակի կազմավորման 30-ամյակ», «Օգանեսոն (Օg)», «Դավիթ Բեկ», «Օհան Դուրան-100» արծաթե հուշադրամները շրջանառության մեջ դնելու մասին**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» և «է» կետերը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. 2022 թվականի ապրիլի 14-ից շրջանառության մեջ դնել «Եղիշե Չարենց-125», «Հայոց բանակի կազմավորման 30-ամյակ» ոսկե հուշադրամները և «Հայոց բանակի կազմավորման 30-ամյակ», «Օգանեսոն (Օg)» արծաթե հուշադրամները՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ով սահմանված նկարագրությունների և էսքիզների:

2. 2022 թվականի մայիսի 23-ից շրջանառության մեջ դնել «Դավիթ Բեկ» արծաթե հուշադրամը՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ով սահմանված նկարագրությունների և էսքիզների:

3. 2022 թվականի օգոստոսի 22-ից շրջանառության մեջ դնել «Օհան Դուրյան-100» արծաթե հուշադրամը՝ համաձայն սույն որոշման Հավելված 3-ով սահմանված նկարագրությունների և էսքիզների:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան
8 ապրիլի 2022 թ., N 55-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. ապրիլի 5-ին (ՀՀԳՏ, 12.04. 2022):

Հավելված 1
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2022 թվականի ապրիլի 5-ի
թիվ 55-Ն որոշման

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
«Եղիշե Չարենց-125» ոսկե հուշադրամի

Հուշադրամի դիմերեսին պատկերված է Չարենցին նվիրված հուշարձանային կոմպոզիցիայից դրվագ (քանդակագործ՝ Ն. Նիկողոսյան, ճարտարապետ՝ Ջ. Թորոսյան, 1985 թ.): Մակագրություններն են՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ», «2022» և «10000 ԴՐԱՄ»:

Հուշադրամի դարձերեսին պատկերված է Չարենցի հուշարձանից դրվագ (քանդակագործ՝ Ղ. Չուբարյան, 1957 թ.) և նրա ստորագրությունը: Մակագրություններն են՝ բանաստեղծի ստորագրությունը և «1897-1937»:

Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	10000 դրամ
Մետաղը/հարգը	ոսկի 900^0
Քաշը	8,6 գ
Տրամագիծը	22,0 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Քանակը	300 հատ

Էսքիզների հեղինակներն են Լուսինե Լալայանը (դիմերես) և Էդուարդ Կուրղինյանը (դարձերես):
Հուշադրամը հատվել է Լեհաստանի դրամահատարանում:

«Եղիշե Չարենց-125» ոսկե հուշադրամի
դիմերեսի և դարձերեսի էսքիզները





ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Հայոց բանակի կազմավորման 30-ամյակ» ոսկե հուշադրամի

Հուշադրամի դիմերեսին պատկերված է Հայաստանի Հանրապետության զինանշանը: Մակագրություններն են՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ», «10000 ԴՐԱՄ» և «2022»:

Հուշադրամի դարձերեսին պատկերված է ՀՀ զինված ուժերի զինանշանից հատված: Մակագրությունն է՝ «ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ 30-ԱՄՅԱԿ»:

Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	10000 դրամ
Մետաղը/հարգը	ոսկի 900^0
Քաշը	8,6 գ
Տրամագիծը	22,0 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Քանակը	400 հատ

Էսքիզների հեղինակն է Հարություն Սամուելյանը:
Հուշադրամը հատվել է Լեհաստանի դրամահատարանում:

«Հայոց բանակի կազմավորման 30-ամյակ» ոսկե հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Հայոց բանակի կազմավորման 30-ամյակ» արծաթե հուշադրամի

Հուշադրամի դիմերեսին պատկերված է Հայաստանի Հանրապետության զինանշանը: Մակագրություններն են՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ», «1000 ԴՐԱՄ» և «2022»:

Հուշադրամի դարձերեսին պատկերված է ՀՀ զինված ուժերի զինանշանից հատված:
Մակագրությունն է՝ «ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ 30-ԱՄՅԱԿ»:

Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը/հարգը	արծաթ 925^0
Քաշը	33,6 գ
Տրամագիծը	40,0 մմ (ութանկյուն)
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Քանակը	400 հատ

Էսքիզների հեղինակն է Հարություն Սամուելյանը:
Հուշադրամը հատվել է Լեհաստանի դրամահատարանում:

«Հայոց բանակի կազմավորման 30-ամյակ» արծաթե հուշադրամի
դիմերեսի և դարձերեսի էսքիզները





ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Օգանեսոն (Og)» արծաթե հուշադրամի

Հուշադրամի դիմերեսին պատկերված է Օգանեսոն (Og) քիմիական տարրի պատկերը, ՄՀՄԻ (Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտ) պատկերանշանը: Մակագրություններն են՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ», «CENTRAL BANK OF THE REPUBLIC OF ARMENIA», «ԾԱՆՐԱԳՈՒՅՆ ՔԻՄԻԱԿԱՆ ՏԱՐՐ», «THE HEAVIEST CHEMICAL ELEMENT», «1000 ԴՐԱՄ DRAM» և «2022»:

Հուշադրամի դարձերեսին պատկերված է Յուրի Հովհաննիսյանի դիմաքանդակը (քանդակագործ՝ Ղ. Չուբարյան, 1979 թ.): Մակագրություններն են՝ «ՅՈՒՐԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ», «YURI OGANESSIAN», «ԳԵՐԾԱՆՐ ՔԻՄԻԱԿԱՆ ՏԱՐՐԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ», «DISCOVERY OF SUPERHEAVY CHEMICAL ELEMENTS»:

Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը/հարգը	արծաթ 925^0
Քաշը	33,6 գ
Տրամագիծը	40,0 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Քանակը	500 հատ

Էսքիզների հեղինակն է Վարդան Վարդանյանը:

Հուշադրամը հատվել է Լեհաստանի դրամահատարանում:

«Օգանեսոն (Og)» արծաթե հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





Հավելված 2

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2022 թվականի ապրիլի 5-ի
թիվ 55-Ն որոշման

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
«Դավիթ Բեկ» արծաթե հուշադրամի

Հուշադրամի դիմերեսին պատկերված են Հալիձորի բերդապարիսպը Խուստուփ լեռան ֆոնին, ջահի և թրի պատկերներ: Մակագրություններն են՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ», «1000 ԴՐԱՄ» և «2022»:

Հուշադրամի դարձերեսին պատկերված են Դավիթ Բեկի հուշարձանից դրվագ (քանդակագործներ՝ Ս. Բաղդասարյան, Մ. Նուրիջանյան, 1978 թ.) և ձիու ոտքերի տակ թափված զենքեր: Մակագրություններն են՝ «ԴԱՎԻԹ ԲԵԿ», «DAVIT BEK»:

Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը/հարգը	արծաթ 925^0
Քաշը	33,6 գ
Տրամագիծը	40,0 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Քանակը	250 հատ

Էսքիզների հեղինակն է Վարդան Վարդանյանը:
Հուշադրամը հատվել է Լեհաստանի դրամահատարանում:

«Դավիթ Բեկ» արծաթե հուշադրամի
դիմերեսի և դարձերեսի էսքիզները





Հավելված 3

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2022 թվականի ապրիլի 5-ի
թիվ 55-Ն որոշման

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
«Օհան Դուրյան-100» արծաթե հուշադրամի

Հուշադրամի դիմերեսին պատկերված են Օհան Դուրյանի հեղինակած «Ունիվերսալիզմ» ստեղծագործությունից հատված և նրա ստորագրությունը: Մակագրություններն են՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ», «1000 ԴՐԱՄ» և «2022»:

Հուշադրամի դարձերեսին պատկերված են Օհան Դուրյանի դիմանկարը և նրա ձեռքերը դիրիժորության պահին: Մակագրություններն են՝ «ՕՀԱՆ ԴՈՒՐՅԱՆ», «OHAN DOURIAN», «100» և «1922-2011»:

Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը/հարգը	արծաթ 925^0
Քաշը	33,6 գ
Տրամագիծը	40,0 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Քանակը	200 հատ

Էսքիզների հեղինակն է Վարդան Վարդանյանը:
Հուշադրամը հատվել է Լեհաստանի դրամահատարանում:

«Օհան Դուրյան-100» արծաթե հուշադրամի
դիմերեսի և դարձերեսի էսքիզները





*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի նոյեմբերի 5-ի թիվ 347-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

Նպատակ ունենալով ճշգրտելու վարկային կազմակերպությունների կողմից իրականացվող ներդրումային ծառայությունների թույլատրելի շրջանակը և համապատասխանեցնելու «Վարկային կազմակերպությունների մասին» օրենքով սահմանված պահանջներին,

հիմք ընդունելով «Վարկային կազմակերպությունների մասին» օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ մասը և 8-րդ հոդվածի 3.1-ին մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով և 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի նոյեմբերի 5-ի ««Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ը հաստատելու մասին» թիվ 347-Ն որոշմամբ հաստատված «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ում (այսուհետև՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) 2-րդ և 3-րդ կետերը «ժա» ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ «ժա1» և «ժա2» ենթակետերով.

«ժա1) իրենց հաշվին և իրենց անունից արժեթղթերով գործարքներ կատարել,

ժա2) թողարկել ածանցյալ ֆինանսական գործիքներ, ինչպես նաև իրենց հաշվին և իրենց անունից կնքել ածանցյալ ֆինանսական գործիքներով գործարքներ,»:

2) 4-րդ կետում՝

ա. «դ» և «ե» ենթակետերը ճանաչել ուժը կորցրած,

բ. «ժբ» ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ «ժբ1» և «ժբ2» ենթակետեր.

«ժբ1) իրենց հաշվին և իրենց անունից արժեթղթերով գործարքներ կատարել,

ժբ2) թողարկել ածանցյալ ֆինանսական գործիքներ, ինչպես նաև իրենց հաշվին և իրենց անունից կնքել ածանցյալ ֆինանսական գործիքներով գործարքներ,»:

3) 5-րդ կետում՝

ա. «զ» և «է» ենթակետերը ճանաչել ուժը կորցրած,

բ. «ժգ» ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ «ժգ1» և «ժգ2» ենթակետեր.

«ժգ1) իրենց հաշվին և իրենց անունից արժեթղթերով գործարքներ կատարել,

ժգ2) թողարկել ածանցյալ ֆինանսական գործիքներ, ինչպես նաև իրենց հաշվին և իրենց անունից կնքել ածանցյալ ֆինանսական գործիքներով գործարքներ,»:

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. ապրիլի 5-ին (ՀՀԳՏ, 13.04. 2022):

4) 5.1-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5.1. «Վարկային կազմակերպությունների մասին» օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ մասի «ե» կետի հիման վրա վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպությունները կարող են՝

1) իրականացնել սույն կանոնակարգի 6-րդ կետով նախատեսված բոլոր գործառնությունները, բացառությամբ ֆիզիկական անձանց մատուցվող ծառայությունների,
2) իրենց անունից թողարկել և տեղաբաշխել գույքով ապահովված պարտատոմսեր, ինչպես նաև թողարկել և տեղաբաշխել սույն կանոնակարգի 6-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված պարտատոմսերը:»:

5) 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. «Վարկային կազմակերպությունների մասին» օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ մասի «ե» կետի հիման վրա սահմանված ունիվերսալ վարկային կազմակերպությունները կարող են՝

1) իրավաբանական անձանցից, իրենց մասնակիցներից, անհատ ձեռնարկատերերից, Հայաստանի Հանրապետությունից և համայնքներից, այլ պետություններից, միջազգային կազմակերպություններից ներգրավել փոխառություններ և (կամ) նրանց հետ կնքել նմանատիպ գործարքներ,
2) իրենց անունից թողարկել և տեղաբաշխել՝

ա. առանց ապահովման պարտատոմսեր՝ ունիվերսալ վարկային կազմակերպության կանոնադրական հիմնադրամը չգերազանցող գումարի չափով,

